Ն.Ս.Օ.Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏԱՄՆԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Մեծարգո Նախագահ,
Հարգարժան նախարար,
Սիրելի ներկաներ՝ զինվորներ, սպաներ և ժողովուրդ հայոց.

Ուրախ ենք ողջունելու ձեզ հանդիսավոր ու օրհնյալ այս օրվա՝ Վազգեն Սարգսյանի անվան Ռազմական Ինստիտուտի հիմնադրման 10-ամյա հոբելյանի առիթով: Հայրապետական Մեր շնորհավորանքն ու օրհնությունն ենք բերում ամենքիդ՝ ի մասնավորի Ռազմական Ինստիտուտի սպասավորներին և շրջանավարտ սաներին, ովքեր այսօր ավարտական վկայական և սպայական ուսադիրներ ստացան:

Ռազմական Ինստիտուտի նորապսակ շրջանավարտները լրացնելու են Հայոց Բանակի ռազմիկների շարքերը, ովքեր այսօր պաշտպանում են մեր Հայրենիքի սահմանները, շարքերը նաև նրանց, ովքեր մեր ժողովրդի խաղաղ կյանքը և ազատությունը պաշտպանեցին դասեամյակ առաջ, պաշտպանեցին հերոսական մաքառումով, արության գործերով ու սխրանքներով:

Սիրելի շրջանավարտներ, դուք սպայական ինչ աստիճան էլ ունենաք ձեր ծառայության ընթացքում, միշտ լինելու եք Հայրենյաց Պաշտպան Զինվոր: Զինավորությունը սոսկ գենք կրելը չէ: Զինավորությունը ձեր հոգում պիտի լինի՝ իբրև սեր ու նվիրում, արժեք ու սրբություն: Զինվորը խաղաղության պաշտպանն է, պաշտպանն է արդարության, իրավունքի և ճշմարտության: Ինստիտուտում ուսումնառության տարիներին ձեռք բերած ձեր գիտելիքները ծառայեցրեք այս արժեքներին և դուք կծառայեք մարդկանց երջանկությանը ու ձեր ծառայության մեջ կգտնեք ձեր հոգու ուրախությունը:

Երկնավորի օրհնությունն ու հովանավոր Աջի զորակցությունն ենք հայցում ձեզ և աշխարհասփյուռ մեր ժողովրդին: Թող Աստված խաղաղ պահի աշխարհը համայն և երկիրս Հայաստան: Թող Տերը մաքուր երկնքի ներքո առաջընթաց ու բարգավաճում պարգևի մեր Հայրենիքին ու ժողովրդին և զորացնի յուրաքանչյուրիս մեր ծառայության մեջ: Թող միշտ շողա փառքն ու պարծանքը Հայոց Բանակի՝ հանուն Տիրոջ Սուրբ Անվան, հանուն հայոց այս նոր օրվա ու գալիքի: Ամեն:

Ս. Էջմիածին,
26 հունիսի 2004 թ.